Քաղվածք

ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի Ռ.Եղոյանի անվան N1 ավագ դպրոց», «Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմական հատուկ վարժարան», «Մեծամորի Ս.Գալստյանի անվան վարժարան», «Վաղարշապատի Գր.Նարեկացու անվան N2 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Գորկու անվան N5 ավագ դպրոց», «Վաղարշապատի Մ.Խորենացու անվան N10 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի՝ 2024 թվականի դեկտեմբերի 12-ի հմ. 2 նիստի արձանագրությունից

Նիստի օրակարգի հմ. 5՝ Ընթացիկ հարցերում լսեցին ֆինանսական տարվա ընթացքում տնտեսումների հաշվին դպրոցի աշխատակազմին և տնօրեններին, համակարգողին (կառ. նոր համ.) լրավճար տալու մասին հարցը: Հաղորդումով հանդես եկան հաշվապահները՝ ներկայացնելով, թե ինչի հաշվին են գոյացել տնտեսումները՝ ըստ հոդվածների և ժամանակաշրջանի՝ եղանակային պայմաններով և այլ հանգամանքներով պայմանավորված: Տնօրենները մեկնաբանեցին և հիմնավորեցին տվյալ դեպքում ըստ աշխատանքի նախատեսված լրավճարների չափերը:

5. Որոշեցին- Հավանություն տալ դպրոցների աշխատակազմերին և տնօրեններին լրավճար տալու առաջարկին (հիմք՝ ԱՕ գլ. 19, հոդվ. 178.3):

Իսկականի հետ ճիշտ է՝ ԿԽ նիստի քարտուղար՝ Հ. Մովսիսյան